


Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս

... ἡοιγίγνεια φάνη βοδοδάκτυλος Ἦως.

ԻԱԻԱԸ. (*)



Վարդեր ու վարդեր
Թերթ իթերթ փրթթեր,
Իկապոյան եթեր
Զինափայլ ամպեր՝
Քայլերուդ առջեւ
Սըփռելով թեթեւ,
Քեզ՝ բընութեան հետ՝
Յայս ժամ հեղաւէտ՝
Մընան մեծայայս,
Ո՛վ քաղցր Արշալոյս, —

Ահա շող իշող
Շուշանաց իքող,
Զիւր ոսկենըշոյլ
Վարսեր հոյլ իհոյլ
Ծուփ իծուփ իսփիւռ,
Թողլով իղեփիւռ՝
Եւ մարգրրտայեւ
Պարզելով թեւեր՝
Նազի Արշալոյս,
Երկընքին այն կոյս:

Ահա վառ իւլառ
Ճակատուն գոհար,
Եւ բըբերն անուշ
Քըթթելով քընքուշ՝
Զերկին եւ զերկիր
Գըրգէ սիրալիր.
Շըրթներուն իւր վարդ
Իժըմիտ զըւարթ՝
Ծաղկանց թոյր իթոյր
Հեշտից ցօղէ բոյր:

Ահա սոյլ իսոյլ
Թըռչնեկացըն բոյլ՝
Ճըռուողեն ընդ բոյս,
« Ողջոյն Արշալոյս ».
Ողջոյն ո զմըւայլ
Փոխարկես իփայլ,
Ու զտըխուր երկիր
Գործես ցընծալիր.
Ո՛հ, յէից ողջոյն՝
Արշալոյս, ողջոյն:

Քեզ ամէն որ տայ
Զիւր ձօն նախընծայ.
Քեզ՝ ըղփափկագոյն,
Քեզ՝ ըղսըրբագոյն.
Քեզ ամպ, սիւք, վըտակ,
Ծաղկունք եւ սոխակ,
Ամէնք տան քեզ գով՝
Հալին քո սիրով,
Ո՛վ երկնային կոյս
Սիրուն Արշալոյս:

Ո՛հ, գու որ այսպէս
Մեր սիրտն ըզմայլես,
Մեր բըբերն աղօտ
Մի թողուր կարօտ,
Երբ գերեզմանին
Յաղջամուղջ փակին...
Այլ՝ զաննուշ քո լոյս
Եւ ահաց ոգւոյս
Շողշողն իյոյս,
Կուսան Արշալոյս:



(*) Ծաղկեցաւ այգածընունդըն վարդամատն Արշալոյս.